ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5
« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-14/2» ԾԱԾԿԱԳՐՈՎ
ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան «22» 05. 2018թ.
ժամը 11^{00}

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝
ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի ԹԱ վարչության պետի տեղակալ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Հ. Մելիքյան,
գնահատողներ՝
ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի թիկունքային ապահովման վարչության իրային, ՎՔՆ, կուլտուր-կենցաղային և սպորտային միջոցներով ապահովման բաժնի պետ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Գ. Ուստյան,
ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության նորմատիվ իրավական ապահովման բաժնի առաջատար մասնագետ, քիծ 3-րդ դասի խորհրդական Ն. Արշակյան,
ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի պետի խորհրդական-իրավաբան Ս. Կեգիշյան,
ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության հատուկ օպերատիվ ծառայության սպա, ավագ լեյտենանտ Ս. Նիկոլյան:
Գնումները համակարգող՝
ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության աշխատանքների և ծառայությունների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի պետ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Ռ.Մարդոյան:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-14/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ռ. Մարդոյան)

1. «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-14/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված նոր եզրակացության քննարկման մասին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

1. «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-14/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված նոր եզրակացության քննարկման մասին.

(Ռ. Մարդոյան)

1.1 Քննարկելով «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-14/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից **18.05.2018թ.** ներկայացված նոր ճշտված եզրակացությունը, ըստ որ «Բի Էմ Փի» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի 143870 ՀՀ դրամի հարկային պարտավորություններ և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետը և այն հանգամանքը, որ մասնակցի կողմից պայմանագիրը դեռևս ստորագրված չէ, գնահատող հանձնաժողովը որոշեց մերժել «Բի Էմ Փի» ՍՊԸ-ի հայտը: Հիմք ընդունելով Կարգի 45-րդ կետի պահանջները, հանձնաժողովը որոշեց մասնակցի տվյալները ուղարկել լիազորված մարմին, եթե մասնակիցը կամ կոմիտեն երեք աշխատանքային օրվա ընթացքում չներկայացնեն լրացուցիչ տվյալներ:

1.2 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը՝ հանձնաժողովը որոշեց «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-14/2» ծածկագրով ընթացակարգը հայտարարել չկայացած:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5 դեմ՝ 0:

Գնահատող(ԳԱՊ) Հ. Մելիքյան

Գնահատող Գ. Ուստյան

Գնահատող Ն. Արշակյան

Գնահատող Ս. Կեգիշյան

Գնահատող Ս. Նիկոլյան

Գնումները համակարգող՝ Ռ. Մարդոյան